

զրօշակի վրա: Եւ ահա նրանք մի կողմից աշխատելով մշտապէս խաւարի մէջ պահել ամբողջ, փչացնել, անբարոյականացնել նրան, մոլեռանդ, Ֆանատիկոս դարձնել նրան, սերմանել նրա այլ և այլ մասերի մէջ երկպառակութիւն, չը թողլ ապ որ մասնի ժողովրդի մէջ որ և է ժամանակակից գաղափար,—մի և նոյն ժամանակ հասարակացում են ամբողջն որ առաջադիմականները և ազատամիտները սուտ առաջադիմականներ և սուտ-ազատամիտներ են, բայց բուն ազատամիտները իրանք խաւարասէրներն են:

Ուշադրութեամբ հետեւեցէք գերմանական խաւարասէրների բոլոր արանքներին, գերմանացիներին վերաբերութեամբ և համեմատեցէք ռուս խաւարասէրների կատարածի և Ալիսիօլի արածների հետ ռուս հասարակութեան վերաբերութեամբ,—և կը տեսնէք որ դրանք կատարելապէս միանման հասարակական երևոյթներ են:

Վերջապէս համեմատեցէք նրանց մեր ողորմելի հայ խաւարասէրներին հետ,—և կը համոզվէք որ ամբողջ աշխարհին երեսին խաւարասէրները կարծես մի գոյրոցից են գուրս եկել, միմեանց կատարելապէս նման են, մի և նոյն անուղիւ միջոցներ են դործ դնում, մի և նոյն ընթացքին հետեւում, մինչև անգամ ստերիօտիկ կերպով մի և նոյն բաներ են կրկնում, այն զանազանութեամբ միայն որ առաջինները գերմանական հասարակութեան մէջ են դործում, երկրորդները ռուս հասարակութեան մէջ, իսկ երրորդները փոքրիկ հայոց հասարակութեան մէջ առաջինները գերմանացի առաջադիմականներին գերմանական ազգի և եկեղեցու դաւաճան են անուանում, երկրորդները ռուս ազատամիտներին ռուս ազգի և եկեղեցու դաւաճան են անուանում, երրորդները հայ առաջադիմներին հայ ազգի և եկեղեցու դաւաճան են անուանում:

Լիչեցիները չէք, որոնք մի քանի օր առաջ մաս և սարսափ էին տարածում Վարանդայի զօրքերի մէջ: Ինչից էք վախենում դուք, ձեր տաղաւարների հրդեհից, թէ այդ մի բուն մարդիկներից: Սրբեք դրանց արհեստով մեր սրբը և դրանով փարատե՞ք մեր նախատիւրը: Երևի, դուք ցանկանում էք, որ ես ամաչեմ յիշեմ, որ ձեր հրամանատարն եմ եղել: Եկէ՛ք, եկէ՛ք հաւաքվե՛ք և ստիպե՛ք զՂՂՂ այդ յանդուգն լիմարներին, որոնց ես չեմ ձանաչում: Իսկե՛ք, թախի՛չ-ցիք, եթէ ոչ, երբով եմ բոլոր սրբութիւններով, որ ես կտորել կը տամ ձեզ, ինչպէս անպիտան ստրուկների, որոնք իրանց ստուերից են վախենում ես:

Այսպէս աղաղակելով, թուրը շարժելով, և անհնազանդներին իր ոտքերի տակ ձգելով, Մելիք-Յուսէօնը հաւաքեց իր զօրքերից մնացածներին, մի կողմը տարաւ, որպէս զի ժամանակ ունենայ նրանց կարգի բերելու: Վարանդացիները, այլ ևս չը տեսնելով թշնամիներին, վազեցին աւարի անհեղ թախի՛չեցիների բանակը, որը արդէն մոխիր էր դարձած: Յանկարծ նրանց ետեից լսելի եղաւ խառնածայն աղաղակ: Մելիք-Յուսէօնը իր մարդիկներով յարձակվեցաւ Ջուզուղի զօրախումբի վրա և չորս կողմից պաշարեց նրան: Կախը նորոգվեցաւ այժմ աւելի յամբուռութեամբ: Յուսէօնը պատահելով թշնամու խումբը, մտնեցաւ Ջուզուղին, և երկուսի մէջ սկսվեցաւ սաստիկ մենամարտութիւն: Ջուզուղին աղաւթեց նրա դրանք և սաղաւարտը, իսկ Յուսէօնին նրա անհամեմատ ճարպակութիւնը: Ջուզուղը խնայում էր նրան, բայց նա ամենին չէր մտածում խնայել Ջուզուղին: Նրա մանկահասակ կլնը, ամուսնի մօտից չը բաժանվելով, կռում էր դարմանակի քաջութեամբ: Յանկարծ, Ջուզուղը իր նոճողը սաստիկ արագութեամբ դարձնելու միջոցին, սպանողական կարգեցան, և ինքը գլխի վար թը-

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսի բաղադրային վարչութիւնը յայտնում է որ հոկտեմբերի 15-ից մինչև 1 նոյեմբերի նշանակված է հետեւեալ տակաւ առաջին հարկաւորութեան միջոցների վրա թիֆլիսում: Թխած հացը առաջին տեսակի, կրուպակա ալիւրից 5 1/2 կոպէկ ֆունտը, ցորենի ալիւրից առաջին տեսակի 4 կոպ. ֆունտը, երկրորդ տեսակի 3 1/2 կոպ., նոյն ալիւրից տեղական թոնրի մէջ թխած հացը առաջին տեսակի 6 կոպ. ֆունտը, երկրորդ տեսակի 4 1/2 կ., երրորդ 4 կոպ., բաւաշներ, թխած կրուպակա և ցորենի ալիւրից խառն, առաջին տեսակի ֆունտը 6 կոպ., երկրորդ 5 կոպ., երրորդ 4 1/2 կ.: Տուաթի միւր առաջին տեսակի ֆունտը 8 կոպ., երկրորդ 7 կոպ., սուկե 1 1/2 կոպ. ֆունտը: Ալիւրի միւր 8 կոպ. ֆունտը:

Թիւրքաց շայտատանից ստացած մասնաւոր նամակից քաղում ենք հետեւեալը: «Բաղէչից գերում են որ այդ քաղաքի վաճառանոցը թիւրքերը վառել են: Այսչեբրտով չէլի Խարուլլա՛ պատուիրել է չէլիբերին հայերի հետ լաւ վարվել, նրանց եղբայրների պէս համարել: Վանի կենտրոնական վարժարանի տեսուչ պ. Փորթուզաբեան իր ընտանիքով ողջութեամբ հասաւ Վան:»

Թիֆլիսի մեզ գրում են: «Այստեղի հայ գիւղացիները բոլորովին ղենք չունեն աւազակների դէմ իրանց անձը և կայքը պաշտպանելու համար, այն ինչ թուրք գիւղացիները բոլորն էլ ղենքեր ունեն: Երբ մի օր հարցրի այդ մասին հայ գիւղացիներին, նրանք ինձ պատասխանեցին որ երևի դա օր էնք է, որովհետև կառուցելը թուրք գիւղացիներին թող են տալիս ղենք կրելու, իսկ հայ գիւղացիներին ստում են, որ ղենք կրելը օրէնքով արգելված է և ում վրա հայ գիւղացիներից ղենք տեսնում են, լուքում են այդ ղենքերը: Եթէ հայ գիւղացիները մէջ օրէնքներին հնուտ, ինտելիգենտային պատկանող անձինք լինէին, նրանք կարող էին ղենք պոլիցիական վարչութեանը, խնայելով բացատրել արդե՞ք ինչպէս հնարար է որ ռուսապատակ այլ և այլ ազգութիւնները, որոնք բոլորն էլ մի բարեխնամ կառավարութեան տակ են ապրում և նոյն օրէնք-

նաւ ցետնի վրա: Յուսէօնը շտապեց օգուտ քաղել այդ ղենքից և պարտատուում էր իր մահաբեր սուրը ինչեցնել ոտնիս կլնին: Բայց Ջուզուղի պահպան հրեշտակը այնտեղ կանգնած էր: Մանկահասակ Սալիսան մի ակնթարթում դուրս է կորցում թուրք Յուսէօնի ձեռքից և իր երկրորդ հարուստով նրան դուրսում է գետին: Տեսնելով իրանց հրամանատարին ընկած, թախի՛չեցիները նոյն բողոքում ցրել կան, և արալուսի առաջին ճառագայիները ողջունեցին վարանդացիների յայտնութիւնը: Չանայնի բերդը աղաւթեցաւ թշնամու պաշարովից:

Պաշարվածները ամբողջ գիւղերը անցկացրին բերդի պարիսպների վրա, չը կարողանալով հանկանալ, թէ արդե՞ք ողքեր պէտք է լինէին նոր յարձակում գործողները, կամ բերդի չքակալքում ինչեր էին կատարվում: Քամու շվիտը, անձրևի փայտումը, որոտի սաստիկ զրոյիները թող չէին տալիս նրանց մի քան լսել: Եւ վախենալով, մի գուռեց իրանց սխալմունքով Չանայնին մատնեն թշնամու ձեռքը, նրանք չը վստահացան բերդից դուրս գալ և մինչև առաւուս մնացին փակված նրա մէջ:

ԳԱՎՏՆԻՔԻ ՅԱՅՏՎՈՒՄ Է՝ ՓԱՆԱՆՔԻՆ

ԳԱՆՈՒՍՏԻ

Եթե՞ ուրախութեամբ վարանդայի իշխանը իր ամբողջ պարիսպների տեսաւ Ջուզուղին, որը յաղթական փառքով, իր խումբին հետ, մտանում էր շարժական կամուրջին: Չորեքշաբթի և երբոր որդին ցնձութեան քաղաքացիներին լազեցին և միմեանց գրկը ընկան: Երբ անցաւ հոգեմայրութեան առաջին բուպէն, մէլքը սասայ. —Հազար անգամ գոհութիւն կը մատուցանեմ Ամենաբարձրակին, որ թեզ, իմ սիրելի Ջուզուղ, և ոչ մի ուրիշին պարտական եմ ես թշնամիներ-

նր վայելում, անզգարնակութեան մի մասին թող ստուածը միտին արգելում է: Անկարելի է որ առհասարակ ղենք կրելը արգելված լինի, քանի որ աւազակներով չքաղապարված է գիւղացին, և իշխան կառավարչապետը նորերումս Անդրկովկասում ճանապարհորդելով, ինքն պատուիրում էր գիւղացիներին օրնել պոլիցիային աւազակների բռնելում, իսկ այս բանը առանց ղենքի անել չէ կարելի: Իսկ եթէ ղենք կրելը արգելված է ուրեմն և թուրք գիւղացիներին ղենք կրելը պէտք է արգելվի:»

ՂԱՐԱՔԻՆՍԱՅԻՑ մեզ գրում են որ այս օրերս Քարվանսարայից գեպի Թիֆլիս ճանապարհում, Աղաչ գիւղի մօտ, ընկած էր մի մարդու դիակ, մասններ կտրտած, դուրսը ջարդված. բացի սրբանից դիակի աջ լե՛ի տակից գնտակը մտնելով, և ձախ թեփ տակից դուրս գալով անաղին վերջ էր բացել լե՛ի վրա: Փորը և դուրսը կորոնք ուր-ուրեքներով լի էին. հողից մարդ չէր կարող դիակին մօտեցալ: Դիակը նոր էր հանած ջրաղացի առուակից:

Մեզ գրում են որ Կիլիջանի սարերը արդէն ծածկված են ձիւնով:

Հոկտեմբերի 17-ին, կիրակի օր, վրաց թատրոնական խումբը ներկայացրեց Արժրուսե թատրոնում «Լա խելազար է» պիլական անդրական կերպերից: Թէ պիլեան շատ սրտաւար է և լե՛ խաղը շատ լաւ էր: Մանաւանդ խոր սուգաւորութիւն էին գործում իրանց խաղով պ. Մէսիսի և օրիորդ Անդրօնիօլա: Մինչև այժմ մենք համոզված էինք որ Մէսիսի կոմիկ է, բայց կիրակի օր վայ ներկայացման մէջ պարտնը ապացուցեց որ ընտիր և խելացի դրամատիկական դերասան է, որ բնականապէս, ճիշդ հողբանական կերպով պատկերացրեց հասարակութեանը մի խելագարի տիպ, առանց արուեստական միջոցներ գործ դրելու: Օրիորդ Անդրօնիօլայի խելացի, մտածած, անզգեստ և հաւասար խաղը լեզի Աննայի դերում անյանգեմանել էր: Պէտք է խոստովանվել որ հայ դերասանական խումբը չունի այն ոյժերը որ ունի վրաց խումբը: Այն դերը որ խաղում էր Մէսիսի, հայոց խմբի մէջ կարող էր խաղալ մի միայն պ. Աղաման, և մենք հաւատացած ենք որ նա այդ դերը կը խաղար աւելի արհեստով, բայց չէր խաղայ այժման բնական, սրտաւար լե՛ և ճիշդ հողբանական կերպով, ինչպէս խաղաց

պ. Մէսիսի: Մեր կանանց պերսոնալի մէջ էլ ոչ ոք չէր կարող խաղալ օր. Անդրօնիօլայի դերը:

ԱԽԱՅԻՍԱՅԻՑ մեզ գրում են: Մեզ մօտ պարբերաբար դալու է անձրևը և այդ պատճառով փողոցներից անցնելը շատ դժուար է. մի կողմից ցեղև, իսկ միւս կողմից ապականեալ օդ, որ դժուար է ներշնչել: Մեր աները և ուսումնարանները ծածկված են հողի կտուրներով. շատ անգամ մեր աներում անձրևի ժամանակ սկսում է կաթիլ: Այդ երանակների պատճառով Ախալցխայում այլ և այլ հիւանդութիւնների կան այժմ, մասնաւոր մասուկների մէջ տարածված է այսպէս անուանված կապոյտ հազը, որից շատերը երեխաներից մտնում են: Բժիշկները դեռ ոչինչ միջոց չեն գործ դնում աղատել բարձր այդ դիպոցը:

ԵՐԵՎԱՆԻՑ մեզ գրում են հետեւեալը: «Աղաւթներին 24-ին Երևանի հայ հասարակութիւնը հրաւիրվեցաւ մասնակցել Թիֆլիսի հայոց Բարեգործական ընկերութեան մի ճիւղ կազմելուն Երևանում: Տեսնե՛ք որքան կը համակրեն մեր հարուստները այդ օգտաւտ գործին: Մեր խնտկողնաներից ոմանք ուղում են առանձին ընկերութիւն կազմել: Մեր կարծիքով Երևանը առանձին ընկերութեան կարօտութիւն չունի. հայերը երբէք չեն սիրում եղածից օգուտ քաղել, այլ միշտ սիրում են նոր բաներ ստեղծել, սիրում են իրանց փառասիրութեանը բաւակաւութիւն տալ և քիչ ժամանակ փայլելուց յետոյ, գործը փչացնում, քանդում են:»

Լաւ ենք որ Թիֆլիսի հայ տիկիները այն լսելի մէջ որ թէ անձնական և թէ նախկական միջոցներով պահպանում էր արկին Բարայիանցի ծաղկոցը, երկպառակութիւն է ծագել: Տիկիները ի մեծ մասը, որոնք անհաւան մի յայտնի գուժար տալով, գործը պահպանելու համար, օրպէս բարեբարոյներ, հեռացան այդ ընկերութիւնից կամնում են այժմ արհեստագործական մի ժըլական զպրց հիմնել աղքատ հայ աղջիկների համար: Նպատակը զովելի է, բայց ինչ հարկ կայ հետանալ արկին Բարայիանցի խումբից և ծաղկոցից: Արեւի էր, ընդհակառակն, երկու գործն էլ և երկու գործերը գանձարանն էլ միացնել և այսպիսով աւելի մեծ անշոյթեամբ գործը առաջ տանել: Ընկերութիւնը կը լինէր ազգայնով, նուր և ճիշդ հողբանական կերպով, ինչպէս խաղաց

մի պաշարովից ազատվելու: Դու շահեցիր մի նոր իրաւունք իմ երանտաղիտութիւնը դրակելու համար: Բայց ո՞վ է այդ գերեցկարէ՞մ երիտասարդը, որ կանգնած է քո մօտ:

—Դա իմ փրկիչն է, հօրեղբայր, եթէ դա չը լինէր, դուք այլ ևս ինձ չէրէ տեսնի:

—Ինչպէս:

—Ջուզուղը պատմեց մեզ արդէն յայտնի անցքը: Վարանդայի մէլքը հիացմամբ դրեց Սալիսային, համբուրեց, ստելով:

—Մերիկ երիտասարդը քո ինձ մատուցած ծառայութիւնը այնքան անգնահատելի է, որ բարձր է ամեն տեսակ վարձատրութիւնից: Պահանջիր ինձանից, ինչ որ կամենում ես: Եթէ քո պահանջար լինի միայն իմ իշխանութեան ներքոյ, երբով եմ քեզ իմ սրով, որ դու անպատճառ կը ստանաս:

Այդ խօսքերի միջոցին Ջուզուղը բռնեց Սալիսայի ձեռքից, երկուսն էլ ծունկ իջան մէլքի առջև:

—Մենք խնդրում ենք ձեր ներումը, հօրեղբայր, դա մեզ համար աւելի թանկագին է, քան ամեն տեսակ պարգևներ:

—Երբե՞մ... ձեր երկուսից... այդ ինչ է նշանակում... ես չեմ հասկանում...

—Այդ երիտասարդը, հօրեղբայր, այդ երիտասարդը...
—Ասմ, չուտով, մի ամաչիր ինձ:
—Այդ երիտասարդը... իմ կինն է:
—Քո կինն է, և նա...
—Մահանդակաւուհի է...
—Ինչպէս, դու ամուսնացած մահանդակաւան աղջկայ հետ, և հրաժարվեցար մեր կրօնի սուրբ ձեւերից... Տէր Աստուած, այդ ինչպէս կարելի է: Սալիսան գուարթ կերպով մէջ մտաւ և...
—Ես արդէն համարեմ թէ բրիտանացի եմ, իմ ամուսնը պատմել է ինձ բոլորը, ինչ որ վերաբերվում է ձեր կրօնին: Ես սիրում եմ քրիս-

տոնեաներին և պարտատ եմ քրիստոնեայ լինել: Ես կը ցանկանայի և մկրտութիւն ընդունել. դուք այնքան բարի էք և ներողամտ, որ կօրնէք ինձ կատարելու իմ բաղձանքը:

Սալիսայի խոստովանութեան մէջ այնքան անկեղծութիւն և բարեհոգութիւն կար, որ Վարանդայի իշխանը բոլորովին հիացած մնաց նրա խօսքերից: Ես մեր բարձրացրեց Ջուզուղին ու նրա կնոջը, զրկեց երկուսին, առելով:

—Բախտաւոր եղիք, իմ գաւակներ, և միշտ բարիտաւոր, իսկ ինձ մնում է այսուհետև ուրախանալ, ձեր երջանութիւնը տեսնելով: Ե՛մ կողմէ Որպիսի հրճուանքով Ջուզուղը և Սալիսան լուցին այդ խօսքերը, որոնց մէջ բովանդակվում էր նրանց ապագայ բարեբախտութիւնը և յոյսը իմ աւելի լաւ ապագայի:

Միւս օրը հրախրվեցաւ մի քանանայ, որը կատարեց Սալիսայի մկրտութեան սուրբ խորհուրդը: Իսկ երրորդ օրը նա ամուսնացաւ Ջուզուղի հետ օրինաւոր պատվով, քրիստոնէական սուրբապարտի ձեւերի համեմատ: Ջուզուղը միայն անուանութեան միւս օրը փանահայտանք իր քաջամարտ Ջուզուղիցիներին հետ, յայտնեց զեցաւ Չանայնի ամբողջ պարիսպների մօտ: Վարանդայի մէլքը ուրախութեամբ շտապեց դիմաւորել նրան: Բարեկամական խոստովանեցները երկու կողմից են թափվում էին: Գաղտնի նման փանահայտն խորամուկ կերպով նրապատմել էր այդ մէլքի խելը: յայտնելով այն միտքը, թէ իր ապագայ բարձրանալու ակնկալութիւնը պէտք է հիմնված լինի իր և նրա հետ կապուելը դաշնակցութեան վրա: Մէլքը, անհրաժեշտութիւնից ստիպված, փաղաքում էր Ջուզուղիցիներին զընդմիջ խառնելու, որովհետև առանց նրա ակնկալութեանը չէր կարող թամայի բոլոր մէլքներին միացնել: Երկուսին ղէմ ղնել: Ամուսնացան և շատ շուտով ցնձում էին (կը շարունակվի) այդ զար-

ծաղկոցը և նախալրժարանը կը ծառայէին որպէս նախապատրաստական դպրոց օրիորդական արհեստագործական դպրոցի համար:

Ճամբար է որ հայը կրէր չէ սիրում եղած բաներից օգուտ քաղել, այլ միշտ հետևում է երգական, անիրագործելի բաներին: Մենք լսում ենք, որ թիֆլիսի թատրոնատեր հայ հասարակութիւնը զիտաւորութիւն ունի հաւաքել մի նշանաւոր դուստր, կազմելով ամսական կամ տարեկան յայտնի գումար վճարող ընկերների մի խումբ և այդ գումարով հիմնել նախ մի թատրոնական, կամ դրամատիկական կուրս և ապա կուրսից ստացած տոկոսներով պահպանել հայոց թատրոնական գործը թիֆլիսում, փոխանակ կազմելու մի ընկերութիւն, որ անմիջապէս պահպանել թատրոնը: Առհասարակ թատրոնը այնպիսի մի դրոժ է, որ ինքն իրան սկսել է պահպանվել, առանց որ և է կուրսի օգուտի, իսկ եթէ կամենում են հաւաքել մի որ և է օժանդակ գումար թատրոնի դեֆիցիտը ծածկելու համար, այն ժամանակ թող դրոժ դնեն այդ գումարը անմիջապէս թատրոնի վրա և ոչ թէ նախ մի կուրս հիմնելու վրա, որի տոկոսներով միայն պէտք է թատրոնը պահպանվի: Այդ մի և նոյն կը լինէր որ մենք հաւաքելով հայ հասարակութիւնից «Վշակի» բաժանորդագրները, փոխանակ այդ բաժանորդագրներից գոյացած գումարը անմիջապէս «Վշակի» հրատարակչին վրա դրոժ դնելու, նախ և առաջ այդ գումարով ապրանքներ առնելնք, մի կ'անուշ լրացնէինք, և ապա առևտուրից ստացած տոկոսներով, մի բանի տարուց յետոյ միայն, սկսելնք լրացնել հրատարակչին: Բացի ստանալի մեր բայր կուրսները իրանց դուրսից ամսացոյցին, որ այնքան միջոցներ չունեն որ բացի իրանց գոյութիւնից, պահպանեն իրանց եկամուտով և մի որ և է այլ հիմնարկութիւն, այլ բաւական է և թէ իրանք հազիւ հազ կարողանում են իրանց սեփական գոյութիւնը պահպանել, վճարելով բնակարանի ծախսը և այլ ծախսերը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԿ ԹԻՒՒՔԻԱՅԻՑ

Կ. Պոլսի 6 հոկտեմբերի
Ներսէս սրբազան չէ այլ ևս պատրիարք թիւրքերէն հայոց: Այսպէս վճռուելի սեպտեմ. 30, հինգ շաբթի օրը երեսուն և ինը քուէներն Աղղ. ժողովոյ: Կոն սեպտեմ. 13-ին դարձանք կը գրէինք թէ հինգուկէ կարելի եղած է սեպտեմ. 7-ի նստին մէջ կարծիք յայտնել պատրիարք սրբազանի հրատարակած ընդունելու: Սեպտեմ. 30-ին նիստ մը եղաւ շատ աղմկակից: Այդ նիստը կը ներկայացնէ մեր ժամանակակից պատմութեան ամենէն տխուր էջերէն մին: Նկատելով որ կառավարութեան կողմէ պահպանել պատասխան մը չը կայ սրբազանի հրատարակած խնդրոյ համար, 39 երեսփոխանք յարմար առիթ սեպտեմբ. ընդունել սրբազանի հրատարակած: Այսօր նիւթապէս մեզ ժամանակը կը պակսի մանրամասնօրէն խօսել այս կարեւոր նիստի վրա:—Գաղտնի կը գրենք: Պատրիարքական փոխարեւորը դնաց ձեւէ լեթիֆայաչին հաղորդել այս որոշումը և խնդրել որ հրաման արուի տեղապահի ընտրութեան: Փառան իսկ մը հարցումներ կրնէ և ի միջի այլոց կըսէ թէ ընտրուած են քաղաքական և կրօնական ժողովները:—որը պիտի կատարեն այս ընտրութիւնը: Ապրապետը կը պատասխանէ թէ թէ օրէն կը կատարուի: Նախարարն ալ կըսէ թէ հրաման ալ չուշանար: Պէտք է զիտնալ որ տեղապահի ընտրութիւնը Աղղ. ժողովը չը կատարել, այլ քաղաքական և կրօնական ժողովները: Այս օրերս դարձեալ խորէն սրբազանի ընտրութիւնը հրատարակի վրայ է և բաւական հարանկանութիւն կայ որ ընտրուի: Ուրիշ մաս մ'ալ սկսած է աւելի յայտնի կերպով աշխատել բարթուղիներն եպիսկոպոսի համար: Տեսնենք: Հայկակ

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Օտար րոտի կտակ: Այս օրերս փարիզում վախճանակեցաւ մի դարձանալի մարդ, որը իր բարեկամին Մեծ-Օպէրա անուանված թատրոնում մի տեղ կտակեց: Այդ նպատակի համար

Փրանսիական բանկում գրամադուլու է դրված, որի սրբոցնունելով իւրաքանչիւր տարի կը վարձվի օպերայի երրորդ կարգի մի տեղ: Մի և նոյն ժամանակ հետաքրքիր է, որ օպերայում տեղը կտակված է մի խոլ ծերունուն: Նրա մահից յետոյ, այդ տեղը կը պատկանի փարիզի կոնսերվատորիային, որը իւրաքանչիւր տարի տալիս է այդ տեղի վրա նստելու իրաւունքը այնպիսի աշակերտին, որը ընծայի է արժանացել: Որքան էլ օտարտուր է թվում այդ կտակը, բայց նրան մեծ համակրութեամբ վերաբերվեցին փարիզի թատրոնական և կրթչական շրջանները:

Կ և զ ծ ու մ: Փարիզի լաբորատորիայի գիւրեկտոր Ժիրար, այս օրերս, 1881 թվի մի հաշիւ հրատարակեց: Այդ հաշիւց երեսու է, նախ, որ այդպիսի լաբորատորիաներ անհրաժեշտ է շինել իւրաքանչիւր մեծ քաղաքում, ուր ուստիկանութիւնը միջոց չունի հակել արդիւնների յատկութեան վրա: Փարիզի լաբորատորիայում կարող էր մտնել ամեն մարդ, որ ցանկանում էր իւրանալ այս կամ այն արդիւնքի արժանաւորութիւնը: Յայտնակեցաւ, որ 1881 թվին, 3,361 տեսակի դիւնիները, որ բերել էին քննութեան համար, միայն 357, և 1037 տեսակ կաթից միայն 318 տեսակը բուսարար համարվեցան: Մնացած բոլոր տեսակները կեղծված էին մաւաւը միասակար, և մասաւը անկաւս խառնուրդներով:

Յ ա ջ ո ղ օ պ է ռ ա ց ի ա: Կանցիդումներկայումս շատ են խօսում մի թշուառ օպերայի մասին, որ կատարել է տեղական մի բժիշկ: Այդ բժիշկը յայտնելով իրարու ժական օպերացիայի միջոցով շատով բժշկել մի ջահիլ ազնւոյ հնց նոր սկսվող թոքերի հիւանդութիւնը, և նա միտք ունէր բաժանել թոքերի հիւանդոտ մասը առողջ մասից: Մտորների թոյնաւորութեամբ, և այլ բժշկների խորհրդի հակառակ սկսված օպերացիայի հետեանք ջահիլ ազնւոյ մահ էր, որ մի քանի ժամից յետոյ պատահեց: Իժևիլի դէմ դատաստանական քննութիւն է սկսել սրբօրոքը:

Ուն դարակահան ցայտնի բան աստուղ զ Պէ տե օ ֆ ի ն Պէ շ ու ու արձան կանգնեցնել լուսաւթ թով, հոկտեմբերի 15-ին առաւօտեան 9 և կէս ժամին, երկրի բոլոր մեծամեծներն և նահանգների պատգամաւորները, նոյնպէս և գիտնական ընկերութիւնների և կորպորացիաների պատգամաւորները հաւաքվեցան ակադեմիայի առաջ, Ֆրանս-Յոլանդի հրատարակի վրա, որ գեղեցիկ զարդարված էր բազմաթիւ դրոշակներով, իսկ այնտեղից գնացին այն դահլիճը, ուր նշանակված էր հանդէսը: Կատարայի (բարձրութեան) վրա, որի մէջ տեղը դրված էր բանաստեղծի պընտակներով պահպանված մարմարեայ կիսարձանը, պարլամենտի անդամները իրանց նախագահոյ, մինիստրները, քաղաքային ներկայացուցիչները իրանց քաղաքապետով, ակադեմիայի և Կրիֆարուտի ընկերութեան ներկայացուցիչները, իրանց սղազայն չորերով, նստեցին դիւնիքայնների և օֆիցերների կարգում: Տարբ ժամին քաղաքապետը ինչ քանցեց հանդէսը ողջունելով հիւրերին, որից յետոյ Մարուտէ Իօկայ, որպէս Պէտեօֆիլ ժամանակակիցը և ընկերը, մի ազդու ճառ խօսեց բանաստեղծի կեանքի և գործունէութեան մասին: Յետոյ հանդիսաւոր սրբօրէնան զիմնը դէպի դեղեցիկ զարդարված Պէտեօֆիլ հրատարակի, ուր, քաղաքապետի տաք ճառից յետոյ, բանաստեղծի արձանը բացվեցաւ էլ լինէ՛ն:—միաձայն աղաղակներով: Արձանը քանդակել է Ալոիֆ Հուսսար, որ ներկայացնում է բանաստեղծին զօնվեցնելի օֆիցերի համազգեստով: Ազգային տօնակալութիւնը վերջացաւ ունդարական հիմնը անկող և արձանը պակեղելով, Յետոյ ամրոցի մէջ խնջոյք կար է յիշատակ Պէտեօֆիլի:

ՇՅԱՍԻ ԷՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏՈՒՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 հոկտեմբերի: Կայսրուհին հոկտեմբերի 13-ին բարեհաճեց այցելել Ս. Պետերբուրգ և Մեծին վանքը: Նախազգիւժ է ծովային բերդեփեփի աւելացնելը նաւերի կառուցումն զարգացնելու համար: Ենթադրված է մի նոր գրահակիր նաւ կառուցանելը:

ՄՕՍԿՎԱ, 15 հոկտեմբերի: Մի մասնաժողով է կազմված որբերի դատարանի մէջ պահված բոլոր իրերը քննելու համար: ՍԿՕՊԻՆ, 15 հոկտեմբերի: Այստեղ հասան բանկի հոգաբարձուները: Բնակիչները յոյս ունեն, որ քաղաքը պատասխանատու չի լինի:

ԽՍՐԿՎՈՎ, 15 հոկտեմբերի: Պօկրօվի սօնակաւաճառը կենդանանում է: Վճարները բաւականացուցիչ են: Գները անցեալ տարվանից ցածր են: Նահանգական դատարանին ներկայացվեցան զիւղացիներ 140 խնդրներ 300,000 դեպետին հոյ նրանց վերադարձնելու մասին, որ նրանք գրաւել էին մինչև բաժինների մասին կանոնադրութեան հրատարակելը:

ՏՕՄՍԿ, 15 հոկտեմբերի: Նաւագնացութիւնը Օր գետի վրա շարունակվում է: Տիւմենի բոլոր բեռները հասցրած են:

ԲԵՐԵՍ-ԼԻՏՅՈՎ, 15 հոկտեմբերի: Այստեղ սպասում են արտերազմական մինիստրին:

ՕԳԵՍՍՍ, 15 հոկտեմբերի: Անդրիական «Pedstar» նաւը, որ Սուլին էր գնում, ջրի մէջ խորատուվեցաւ ափերի մօտ: Երեք հոգի կորել են:

ԿԱՏԱՐՈ, 15 հոկտեմբերի: Հերցեգօվինայի մէջ սպառամբական հինգ խումբեր երևացին թուով 300 մարդ: Զօրքերի վրա յարձակումները յաճախ են պատահում: Ապստամբները քիչ պաշար ունեն, բայց ուզում են իրենք բաւական ունեն:

ՁԵՍԼԻՆ, 15 հոկտեմբերի: Իշխան Կարագէօրգիւկի թշնամիները նրան են համարում Միլան թագաւորի վրա ատորձանակ արձակելու սկզբնապատճառ: Լուր է տարածված, որ անցեալ շաբաթ իշխան Կարագէօրգիւկը զաղտնի կերպով եղել է այստեղ:

ԿՕՊԵՆՀԱԳԵՆ, 15 հոկտեմբերի: Գերմանական ծովի, Կատեգատի և Բալտեան ծովի վրա սաստիկ փոթորիկ կար: Մի քանի նաւեր կորել են, որքան յայտնի է, նրանց թուով չը կան ուսուց նաւեր:

ՓԱՐԻՅ, 15 հոկտեմբերի: Կարասիք շինող բանուորների Սենտ-Անտուանի փողոցում սկսված ուսանողական անկարգութիւնները վերջացրած են սցոլիցիայից:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 հոկտեմբերի: «Новое Время» լրագիրը հաղորդում է, որ աւստրիական պատերազմական մինիստրը պահանջում է ամրոցների աշխատանքների տւելանցնել Պերեմիշլի մէջ ուսուց սահմանի վրա: Աւստրիական պատգամաւորների ժողովի զեկուցանող Պերշի մէջ արտաքին քաղաքականութեան վերաբերութեամբ ընտրված է Գիւբներ, որ Արևելքի մէջ Ռուսաստանի հետ համաձայնութիւն կայացնելու կողմնակից է: Ֆինանսների մինիստրը դատաստանի ենթարկեց մաքսատան կառավարչին, խորհրդի անդամին, վերակացուին և երկու ատրիձանաւորների, որոնք 1880 թուականին արձակված էին ծառայութեանց կեղծուցների համար: Բարոն Շտիլից ստորագրվեցաւ Անդրկովկասեան երկաթուղիների օրիգացիաներին 2 1/2 միլիոնի: «Полое» լրագիրը հաղորդում է, որ ենթադրված է Արևելեան Սիբիրիայի մէջ բժիշկներ պահելու համար ծախսել մօտ 85,000 ռ. փոխանակ մինչև այժմ ծախսվող 45,000 ռուբլու: «НОВОСТИ» լրագիրը հաղորդում է, որ խերսոնի և Եկատերինսուլայի նահանգի բնակիչ հրէաներին թոյլ է տուած կապալով վերցնել հողեր այն պայմանով, որ նրանք անձամբ պարտաւոր կերպով դրոշմութեամբ:

ԵԱԼՏԱ, 15 հոկտեմբերի: Մօսկվայի որբերի դատարանի զանապահ Պօտապօլցի մը

նայ այստեղ երկու շաբաթ և այժմ ուղևորվում է Մօսկվա:

ՕԳԵՍՍՍ, 16 հոկտեմբերի: Գատաստանական պալատայի մէջ կը դատվեն 9 հրէաներ, որոնք կեղծում էին արտասահմանեան անցագրներ այն անձանց համար, որոնք խուսափում էին զինուորական պարտականութիւններից: Նրանց օգնում էին քաղաքապետի գրասենակում ծառայող երեք աստիճանաւորներ:

ՄՕՍԿՎԱ, 16 հոկտեմբերի: 1883 թուի նախահաշուով եկամուտները լինելու են 5,045,307 ռուբլ, իսկ ծախսերը 5,398,072 ռ: Պակասորդը կը ծածկվի օրիգացիաներ հրատարակելով: Գատաստանական պալատի պրօկուրօրը ուղևորվեցաւ արտասահման, ինչպէս լսվում է, որ հետախուզէ Ռիօլից փողերի ծածկելը լճուցնի բանկի մէջ:

ՎԱԳԻՊԱՍՏՕԿ, 16 հոկտեմբերի: Ծովային հաղորդակցութիւնը նիկոլայեվսկի հետ դադարեցրած է:

ՆԻՃՆԻՆՆՈՎՊՕՐՕՅ, 16 հոկտեմբերի: Այստեղ տաք է: Ջուրը պակասում է: Բեռները հասնում են:

ԽՍՐԿՎՈՎ 16 հոկտեմբերի: Մանուֆակտուրային ապրանքներ անպատճառին բերված են անցեալ տարվանից մէկ և կէս անգամ աւելի: Առևտուրը հանդարտ է: Խարիօլի համալսարանի մէջ 1100 ուսանողներ կան: ՍԱՄԱՐԱ, 16 հոկտեմբերի: Այստեղ ցուրտ է:

ԵԿԱՏԵՐԻՆՕԳՐԱԿ, 16 հոկտեմբերի: Տեւրիկից պաշտօնապէս հաղորդված է, որ հոկտեմբերի 7-ին գիշերը Կարաբեփեան սարեց հրանքային վիճուքն եղաւ Տամանից Ա վերստ հեռաւորութեամբ: Լսվում էին ստորերկրայ հարուածներ: Լավան թափվեցաւ լեռան շուրջը կէս վերստ տարածութեան վրա: Սարը ձաքվեցաւ 1/4 արշին լայնութեամբ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 հոկտեմբերի: Ս. Պետերբուրգի հաշտարար դատարանի մօտ հոկտեմբերի 18-ին նշանակված են 400 միատեսակ երկաթուղիական զանգասներ, որ հացալաւանները ներկայացրել են Պիկոսիկու միջնորդութեամբ: Երկաթուղիներին պաշտպանում են Գերիկ և Նիմիսկի երդվեալ հաւատարմատարները:

Կ. ՊՕԼԻՍ, 15 հոկտեմբերի: Գերիլի-Փաշա պահվում է խնամ հսկողութեան տակ երկաթուղիական յանձնարարութեան մէջ անհամեստ դանվելու պատճառով:

ՄՕՍԿՎԱ, 15 հոկտեմբերի: Արբերի դատարանի զանազան Պօտապօլցի այսօր ուղևորվում է Ետապայից: Գատարանի անդամները հաւատացած են, որ դուժմարները անձնութիւն են: Միկոսօպոլի աւազակներից մէկն էլ բռնված է: Նրա մօտ գտել են 100,000 ռուբլ:

ՕԳԵՍՍՍ, 15 հոկտեմբերի: Օրէսսայի և Սուլինի մէջ շատ նաւեր են կորել:

ԲԵՐԼԻՆ, 15 հոկտեմբերի: Լանդաագի անդամների ընտրութիւնը սպասածին հաւանակ յաջող էր պահպանողականների համար:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 հոկտեմբերի: Կովկասի տրանզիտի հարցը ենթադրված է այնպէս վճուել, որ տրանզիտի սպրանքները բնովն ուսուց մաքսատների մէջ: Մօսկու-Մինի անկարգութիւնների կազմակերպուած մասնակցից է ուսու գաղթական կրպակներ:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

